ՀՏԴ 728.1.012

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Կ.Ռ.Ազատյան

ԵՐԵՎԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐՈՒՄ. 1920-50-ԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քննարկվում են ք.Երևանում 1920-50-ականներին կառուցված բնակելի շենքերի արդիականացման խնդիրները: Հիմնավորվում է այս շրջանի բնակելի կառուցապատման կարևոր նշանակությունը քաղաքի կերպարի ձևավորման գործընթացում, ինչն էլ ենթադրում է դրա պահպանության խնդիրներին հատուկ ուշադրության պահանջը: Բնակելի շենքերի արդիականացման խնդիրները դիտարկվում են պահպանության անհրաժեշտության, ժամանակի ազդեցության և արդիականացման պահանջի, արդիականացման փորձի և գործառույթների ուղղություններով: Վերլուծության արդյունքում վեր են հանվում ք.Երևանի 1920-50-ականների բնակելի կառուցապատման արդիականացման գործընթացի հիմնական ուղղությունները:

Առանցքային բառեր. *բնակելի շենք, ք.Երևան, 1920-50-ականների ճարտարապետություն, արդիականացում, վերակառուցում, պահպանում, քաղաքային միջավայր, կոնստրուկտիվ լուծում, ճակատ, տանիք, կցակառույց, կերպար, գործառույթներ*

Պահպանության նշանակությունը: XX դարի առաջին կեսին ք.Երևանի կառուցապատման զարգացումը պայմանավորվում է ճարտարապետական մտածելակերպի բարձրագույն աստիճանով՝ անսամբլով: Անսամբլային կառուցապատումը դառնում է շինարարության գլխավոր պահանջներից մեկը, որը հստակորեն արտահայտվում է ք.Երևանի քաղաքային միջավայրի ձևավորման գործընթացում [1]: Այստեղ կարևոր տեղ են զբաղեցնում 1920-50-ականներին կառուցված բնակելի շենքերը, որոնց ճարտարապետության դերը քաղաքի գեղարվեստական կերպարի կայացման գործընթացում անգնահատելի է: Ա.Թամանյանի 1924 թ. քաղաքի վերակառուցման նախագծում հանդիսանալով փողոցների ձևավորման գլխավոր տարրեր՝ դրանք համապատասխան մասշտաբ և արտահայտչություն են հաղորդում քաղաքի կերպարին: Բնակելի կառուցապատումը ներդաշնակվում է քաղաքի խորհրդանիշեր հանդիսացող բացառիկ կառույցներին՝ ձևավորելով նաև ինքնուրույն անսամբլներ [2, 3]: Այսպիսով ք.Երևանի այս շրջանի բնակելի կառուցապատումը կարևոր նշանակություն ունի քաղաքի կերպարի համար և պատմական արժեք է ներկայացնում:

Վերջին տասնամյակներում աշխարհի շատ քաղաքներում կտրուկ աճել է XX դարի առաջին կեսի բնակելի կառուցապատման հանդեպ հետաքրքրությունը, կապված տվյալ ժամանակաշրջանում դեռևս ձևավորման փուլում գտնվող բազմաբնակարան շենքի լայն տարածման համընդհանուր յուրահատկությունների հետ: Ներկայումս այդ կառուցապատմանը

պատկանող բազմաթիվ համալիրներ շատ քաղաքներում վերցված են պահպանության, որպես քաղաքաշինության հուշարձաններ: Այդ գործընթացն ուղղված է քաղաքի պատմական կերպարի պահպանության ապահովմանը, և կառույցների ներկա գործունեությունն ու կարճ պատմությունը չեն խոչընդոտում դրանց պատմամշակութային հուշարձանների կարգավիճակի տրամադրմանը [4-6]: Ք.Երևանում ևս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել XX դարի առաջին կեսի բնակելի համալիրներին, որոնց պահպանումը կարևոր նշանակություն կունենա քաղաքի կերպարում ժառանգորդության զգացման մշտական ապահովման գործընթացումը:

Արդիականացման անհրաժեշտությունը: Ժամանակն իր ազդեցությունն է թողնում յուրաքանչյուր երևույթի, գործընթացի, նյութական շրջապատի և դրա կառուցվածքների վրա [7]: Բացառություն չէ նաև ք.Երևանի XX դարի առաջին կեսի բնակելի կառուցապատումը, որն էականորեն ձևափոխվել է կենսագործունեության 60…80 տարիների ընթացքում: Եվ այդ փոփոխություններն ինչպես պլանավորված պետական միջոցառումների, այնպես էլ անհատական ոչ մասնագիտորեն կատարված գործողությունների արդյունք են:

Խորհրդային տարիներին այս շրջանի բնակելի կառուցապատման փոփոխությունները հիմնականում իրականացվել են 1920-ականների շենքերի վերակառուցման նպատակով: Այդ առաջին բազմաբնակարան շենքերի վերակառուցման համար արդեն 1930-ականների վերջին առաջացան երկու հիմնական պատճառներ՝ բնակելի ֆոնդի լրացում և քաղաքային փողոցների կառուցապատման նոր մասշտաբի ապահովում: Այս խնդիրների համատեղ լուծման պահանջն էլ պայմանավորեց վերակառուցման բնույթը՝ վերնահարկերի իրականացում: Լրացուցիչ հարկը թույլ էր տալիս փոքր միջոցներով ավելացնել բնակելի ֆոնդը և շենքերի ծավալները բերել 1930-ականներին վերջնականապես ամրապնդված փողոցների քաղաքային մասշտաբին [1] (նկ.1): Պլանավորված վերակառուցման այլ դրսևորումներ էին խորհրդային տարիներին բնակելի շենքերին բակային ճակատների կողմից խորը խորշապատշգամբներ կցելու և միջհարկային ծածկերի վերակառուցման գործընթացները: Պետք է նշել, որ դրանց արդյունքում շենքերի տարբեր ձևափոխություններն ընդհանուր առմամբ ներդաշնակվել են նախկին կառուցվածքին և քաղաքացիների մեծ մասն այսօր չի նկատում այդ փոփոխությունները:

Նկ. 1. Երևանի բնակելի շենքերի վերակառուցման գործընթացը խորհրդային տարիներին

Վերը նշված կազմակերպված փոփոխությունների դրական միտումները չեն վերաբերվում գործընթացի անհատական իրականացման դեպքերին: Վերջին տասնամյակների սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետևանքով վերակառուցման պետական ծրագրերը

կասեցվեցին, բնակելի շենքերը դարձան մասնավոր սեփականության տարրեր, իսկ քաղաքային միջավայրի վերաբերյալ օրենսդրությունն էլ թերի է և անգործունյա: Արդյունքում յուրաքանչյուր անհատ թույլատրելի և անթույլատրելի միջոցներով ձևափոխում է իր կացարանը, հաշվի չառնելով հասարակական հիմնական շահերը, միջավայրի անվտանգությունն ու գեղագիտական որակը: Վերակառուցման տարերային դրսևորումների ընդհանրացումը թույլ է տալիս վեր հանել դրանց հետևյալ հիմնական ուղղությունները.

- կառուցվածքի խաթարում (կրող պատերում անթույլատրելի բացվածքներ, առանց որոշակի տեխնիկական լուծման կցակառույցներ, միջհարկային ծածկերի ձևափոխություններ),
- արտաքին ճարտարապետական լուծումների աղավաղում (1-ին հարկի մակարդակում ճակատի հարթության վերակառուցման խիստ տարերայնություն, բազմաթիվ և բազմազան լուծումներով կցակառույցների իրականացման պարագայում բակային ճակատների քաոսային բնույթ, տանիքների վերակառուցման տարերային լուծումներ) (նկ. 2):

Նկ. 2. Երևանի բնակելի շենքերի վերակառուցման գործընթացը վերջին տասնամյակներում. կցակառույցներ, տանիքների և ճակատային հարթության աղավաղումներ

Ինչպես արդեն նշվեց, ժամանակն իր ազդեցությունն է թողնում յուրաքանչյուր կառուցվածքի վրա, և բնակելի շենքի կենսագործունեության ընթացքը չի կարող զերծ մնալ փոփոխությունների մշտական գործընթացից [8]: Արդի քաղաքաշինության կարևոր

խնդիրներից է քաղաքային տարածքների օգտագործման արդյունավետության բարձրացումը, որի անբաժանելի մասն է կազմում գոյություն ունեցող բնակելի ֆոնդի ռացիոնալ օգտագործման պահանջը: Հետևաբար, անհրաժեշտ է կառույցի պատմական զարգացման գործընթացում ձևավորված կառուցվածքը համապատասխանեցնել բնակչության կենցաղի, աշխատանքի և հանգստի նոր պայմանների անընդհատ աճող պահանջներին [9, 10]: Պատմաճարտարապետական արժեքավոր ժառանգությամբ քաղաքային միջավայրի վերակառուցման ժամանակ վերը նշված խնդիրներին ավելանում է նաև պատմական միջավայրի պահպանության խնդիրը: Պետության և ժողովրդի մշակութային ձեռքբերում հանդիսացող ժառանգության պահպանության, կատարելագործման և արդի պայմաններում օգտագործման հարցը հատուկ նշանակություն է ստանում [5]:

Այսպիսով, ք.Երևանի 1920-50թթ. բնակելի կառուցապատման մեջ արտացոլվում են քաղաքային կյանքի և տարածության մի շարք կարևոր խնդիրներ՝ քաղաքաշինական արժեքավոր ժառանգության պահպանում, քաղաքի գեղարվեստական կերպարի վերականգնում և զարգացում, բնակելի միջավայրի անվտանգության ապահովում: Նման բազմազան խնդիրների լուծումը պայմանավորում է այդ ժամանակաշրջանի բնակելի կառուցապատման արդիականացման գործընթացի անհրաժեշտությունը:

Արդիականացման փորձի հիմնական գործառույթները: Ինչպես վկայում են համաշխարհային փորձի ուսումնասիրությունները, վերջին տասնամյակներում աշխարհի շատ քաղաքներում XX դարի առաջին կեսի բնակելի կառուցապատումն ընկալվում է որպես պահպանության և արդիականացման ենթակա պատմաճարտարապետական արժեք՝ ներառելով ինչպես առանձին շենքեր, այնպես էլ ամբողջ քաղաքաշինական համալիրներ [9-11]: Բազմաթիվ նոր կառուցվածքներ, որոնց կարճ ժամանակ առաջ արժանի ուշադրություն չէր դարձվում, ներկայումս վերցվում են պետական պահպանության ներքո՝ ճարտարապետության առանձին հուշարձանների պահպանման գոտու կազմում, կամ էլ որպես քաղաքաշինության արժեքավոր հուշարձաններ և պատմական արգելոցային տարածքներ [5, 12]: XX դարի առաջին կեսի բնակելի շենքերը կրում են նաև մեծ նյութական արժեք, և դրանց վերակառուցումը թույլ է տալիս պահպանել բնակելի ֆոնդը՝ ապրելու հարմար պայմաններ ապահովելով նաև հին շենքերում:

Այսպիսով, XX դարի առաջին կեսի բնակելի կառուցապատման արդիականացումն արդի քաղաքային տնտեսության կարևոր խնդիրներից է: Արդիականացման գործընթացն ընթանում է հետևյալ հիմնական գործառույթներով.

- նախապատրաստական միջոցառումներ (պահպանման ենթակա շենքերի որոշում, հաշվառում և բնօրինակային հետազոտություն, արդիականացման խնդիրների հստակեցում, միջոցառումների ֆինանսական հիմքերի կանխորոշում),
- արդիականացման խնդիրների որոշում (կացարանի սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում և կառուցապատման պատմամշակութային արժեքի պահպանություն),

- շենքերի արդիականացման և վերակառուցման միջոցառումներ (կոնստրուկցիաների և հաղորդակցման համակարգերի վերակառուցում, հարկայնության ավելացում, հատակագծային փոփոխություններ, ճակատային հարթությունների արդիականացում):

Վերը նշված գործառույթներն ընդհանրացված են բազմաթիվ քաղաքների օրինակների հիման վրա [9, 10, 12, 13]: Սակայն յուրաքանչյուր որոշակի դեպքում գործընթացն օժտվում է տեղական պայմաններին բնորոշ գծերով: Փորձելով դիտարկել նշվածը ք.Երևանի 1920-50թթ. բնակելի շենքերի տեսանկյունից՝ կարելի է նկատել, որ արդիականացման խնդիրներն այստեղ մեծամասամբ կապվում են կառուցապատման պատմամշակութային արժեքի պահպանության հետ, իսկ կացարանի սանիտարահիգիենիկ պայմանները և բնակարանների հատակագծային լուծումների բարեփոխումը, ինչպես նաև հաղորդակցուղիների վերակառուցման գործընթացներն արդեն իրագործվել են բնակիչների կողմից: Այսպիսով, ք.Երևանի 1920-50թթ. բնակելի կառուցապատման համար անհրաժեշտ է մշակել արդիականացման գործընթացի սեփական ծրագիր, որը հաշվի կառնի տեղական պայմանների որոշակի առանձնահատկությունները:

Ք.Երևանի 1920-50թթ. բնակելի շենքերի արդիականացման խնդիրները: Ընդհանրացնելով ք.Երևանի 1920-50թթ. բնակելի կառուցապատման արդիականացման գործընթացի նպատակները՝ դրանք կարելի է խմբավորել երկու հիմնական ուղղությամբ՝ շենքերի կոնստրուկտիվ անթույլատրելի փոփոխությունների վերացում և արտաքին ճարտարապետության կարգավորում: Արդիականացման գլխավոր նպատակներն էլ ենթադրում են գործընթացի հիմնական ուղղություններն ու գործառույթները:

Կոնստրուկտիվ խնդիրների տեսանկյունից պետք է նշել, որ այս շենքերի բնօրինակային վիճակի միակ սկզբունքային խնդիրը կարող է լինել միջհարկային փայտե ծածկերի ֆիզիկական մաշվածությունը: Դրանք հնարավոր է փոխել երկաթբետոնե ծածկերով, իսկ կրող պատերի համակարգում լուրջ խնդիրներ գրեթե չկան (բնօրինակային վիճակում), քանի որ դրանք իրականացվել են քարե ավանդական երկարակյաց պատերով: Այստեղ խիստ կարևոր են հետագա միջամտություններից առաջ եկած կամ սպասվող խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել երկու ուղղությամբ: Առաջին հերթին պետք է ամրացվեն շենքերի կրող պատերի մեջ առանց մասնագիտական մոտեցման ավելացված բացվածքները: Երկրորդ ոչ պակաս կարևոր ուղղությունը կցակառույցների կարգավորումն է: Դրանց մեջ բավական մեծ քանակ են կազմում դեպքերը, որտեղ լրջորեն խախտված են կոնստրուկտիվ պահանջները՝ կցակառույցներն անհրաժեշտ չափով չեն կապված շենքերին, չունեն բավարար ամրության կրող կոնտրուկցիաներ, առկա են վնասված հատվածներ, չափից մեծ կոնսոլներ: Դրանց մի մասը հնարավոր է կարգավորել և բերել անվտանգ շահագործման պայմանների, իսկ որոշ դեպքերում պետք է իրականացնել քանդման և ամբողջովին վերակառուցման աշխատանքներ:

Արտաքին ճարտարապետության խնդիրներն առավել բազմազան են: Առաջին հերթին դա շենքերի ճակատների կարգավորումն է, որտեղ կարևոր տեղ է զբաղեցնում առաջին հարկի

խնդիրը: Այստեղ պետք է իրականացվի տարածքների ֆունկցիոնալ փոփոխություն (որտեղ դեռ մնացել են բնակարաններ), քանի որ դրանք չեն համապատասխանում ապրելակերպի սանիտարահիգիենիկ պահանջներին: Կարևոր է, որ առաջին հարկի ֆունկցիոնալ փոփոխության գործընթացն ուղեկցվի ճակատային կազմակերպված լուծումների ներդրմամբ [14]: Արդեն իրականացված դեպքերի մեծամասնությունում այդ խնդրին տրված լուծումները ծայրահեղ ցածր մակարդակի են, ինչը պայմանավորված է գործընթացի իրականացման տարերայնությամբ: Իհարկե, ֆունկցիոնալ փոփոխությունը բերում է ճակատի փոփոխության, մասնավորապես, կարիք է առաջանում փոխարինել բնակարանների պատուհանները մեծ ցուցափեղկերով: Սակայն համալիր մասնագիտական մոտեցման պարագայում կարելի է գտնել լուծումներ, որոնք ոչ միայն կբավարարեն նոր ֆունկցիոնալ նշանակությանը, այլ նաև համահունչ կլինեն նախկին տեսքին և բարձր որակ կհաղորդեն միջավայրի գեղարվեստական կերպարին: Հարկ է մշակել մոտեցումներ, որոնք կիրառելի լինեն ոչ միայն նոր իրականացվող հատվածներում, այլ նաև թույլ տան կարգավորել արդեն կատարված ձևափոխությունները:

Բացի առաջին հարկերի հատվածից կարևոր է նաև շենքերի փողոցային ճակատների ընդհանուր կարգավորումը: Այստեղ նույնպես մաքրման և նախկին լուծումների վերականգման անհրաժեշտություն կա, որը հիմնականում կապված է պատշգամբերում իրականացված կամայական միջոցառումների հետ: Հարկ է նշել, որ 2011-13 թթ. այս ուղղությամբ կատարված համաքաղաքային միջոցառումները՝ գլխավոր փողոցների շենքերի ճակատների վերականգնման աշխատանքները, որոշակի դրական արդյունք տվել են: Վերացվել են տարիների ընթացքում առաջացած բնական և արհեստական խայտաբղետ փոփոխությունները, վերականգնվել է ճարտարապետության արտահայտչությունը: Սակայն հարկ է վերանայել մի շարք ցեմենտ-ավազային շաղախով սվաղված ճակատներում կասկածելի ճաշակի երանգների ընտրության հարցը: Պետք է նկատել նաև, որ աշխատանքները կատարված են ցածր որակով, և գործընթացի շարունակության պարագայում հարկ է ուշադրություն դարձնել այս խնդիրներին:

Շենքերի արտաքին ճարտարապետության կարգավորման գործընթացում կարևոր են նաև բակային ճակատները, որոնց քառսային պատկերը բացասաբար է ազդում բնակելի ներքին միջավայրի վրա: Վերջին տասնամյակներում տարերային ձևով իրականացված անթիվ կցակառույցները ոչ միայն խոցելի են անվտանգության տեսանկյունից, այլ նաև խաթարում են շենքերի ճակատային տեսքը: Այստեղ անհրաժեշտ է կառուցվածքային բարեփոխումներին զուգահեռ նաև լուծել գեղարվեստական հիմնախնդիրները՝ կառուցապատման մասնակի լրացման, բացվածքների նույնացման, գունային լուծումների և մակատեսքերի յուրօրինակ միջոցների կիրառմամբ ձևավորելով պարագծային կառուցապատման բակային տարածքները եզրափակող գեղագիտապես հարուստ և կազմակերպված ճակատային հարթություններ:

Արտաքին ճարտարապետության համար կարևոր նշանակություն ունի նաև տանիքների վերակառուցման հարցը: Այս խնդիրը տեսանելի է տվյալ շրջանի գրեթե բոլոր բնակելի շենքերում, որտեղ առկա են երկու հիմնական տարբերակ՝ տանիքները հնացած են և անհապաղ

վերակառուցման կարիք են զգում կամ դրանք արդեն վերակառուցված են անհատների կողմից և խաթարում են շենքի արտաքին ճարտարապետությունը: Վերջին տասնամյակներում իրականացված վերնահարկերի բազմազանության մեջ դժվար է գտնել գեթ մեկ քիչ թե շատ հաջող լուծման օրինակ: Գեղարվեստական լուծման թերացումների հիմնական պատճառներից կարելի է նշել առաջին հերթին իրականացման անհատական բնույթը, երբ վերնահարկի լուծումները տրված են շենքի ընդամենը մեկ-երկու թռիչքների սահմաններում՝ առանց հաշվի առնելու ընդհանուր կառույցի և առավել ևս կառուցապատման կերպարի ընդհանուր սկզբունքները: Հաջորդ ոչ պակաս բացասական երևույթը վերնահարկերի ճակատներում ստորին հատվածի ճարտարապետական լուծումների և մոտիվների ոչ պատշաճ մակարդակի նմանակումն է: Առհասարակ, ճակատային հարթության նման հագեցած լուծմամբ կառույցների վրա վերնահարկի իրականացման դեպքում երևի թե ճշմարտացի չէ փորձել կրկնել դրա ոճական տարրերն ու մոտիվները: Այստեղ առավել նպատակահարմար կլինեն երեսապատման նյութի կոնտրաստային փոփոխությամբ արտահայտված ֆոնային, պարզ լուծումները: Բնակելի շենքերի տանիքների լուծման լավագույն տարբերակն, ըստ երևույթին, ձեղնահարկերն են, որոնք թույլ կտան լուծել տանիքների հետ կապված գրեթե բոլոր խնդիրները: Ձեղնահարկերն աննկատ կմնան ճակատային հարթությունում, կլուծեն տանիքների վերակառուցման խնդիրը՝ միաժամանակ ընձեռելով բնակելի մակերեսի ավելացման հնարավորություններ: Կարևոր է նշել, որ ասելով ձեղնահարկ՝ հասկանում ենք տանիքի թեթև կոնստրուկցիաների սահմաններում լուծված, բնակության համար նպաստավոր պայմաններ ապահովող (բնական լուսավորություն և օդափոխություն, ջերմային և ձայնային մեկուսացում) տարածություն, այլ ոչ թե մետաղական ծածկույթի ներքո քողարկված երկաթբետոնե կոնստրուկցիաներով լրացուցիչ հարկ, ինչը երևանյան ներկա իրականության մեջ լայն տարածում ստացած գործընթաց է: Այսպիսով, արտաքին ճարտարապետության կարգավորման համար կարևոր նշանակություն ունեն տանիքների վերակառուցման աշխատանքները, որոնք պետք է իրականացվեն արդեն կառուցված ինչպես նաև դեռ չկառուցված հատվածների միասնական վերակառուցման ծրագրով: Դա հնարավորություն կստեղծի լուծել վերնահարկերի հետ կապված տարբեր խնդիրները և կազմակերպված բնույթ և գեղարվեստական որակ կհաղորդի քաղաքային փողոցների ճարտարապետական կերպարին [15, 16] (նկ. 3):



Նկ. 3. ք.Երևանի 1920-50թթ. բնակելի շենքերի արդիականացման հիմնական գործառույթները

Ամփոփում: Ք.Երևանի 1920-50-ականների բնակելի շենքերի վերաբերյալ քննարկված նյութի ընդհանրացումը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

1. Բնակելի շենքերը կարևոր նշանակություն ունեն քաղաքի կերպարի ձևավորման գործընթացում և պատմական արժեք են ներկայացնում: Դրանք անհրաժեշտ է վերցնել պետական պահպանության ներքո, ինչը կնպաստի քաղաքային միջավայրում ժառանգորդության զգացման պահպանությանը:
2. Բնակելի կառուցապատումը ժամանակի ազդեցության ներքո ենթարկվել է զգալի ձևափոխության, որտեղ արտահայտված թերությունները խմբավորվում են երկու հիմնական ուղղության խնդիրների՝ անվտանգության և գեղարվեստական:
3. Բնակելի շենքերի արդիականացման անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքային կյանքի և տարածության կարևոր խնդիրների տվյալ կառուցապատման մեջ առկայությամբ՝ քաղաքաշինական ժառանգության պահպանում, քաղաքի գեղարվեստական կերպարի վերականգնում և հետագա զարգացում, բնակելի միջավայրի անվտանգության ապահովում և արդի պահանջներին համապատասխանեցում:
4. Բնակելի կառուցապատման արդիականացման գործընթացի ծրագիրը պետք է հաշվի առնի տեղական պայմանների առանձնահատկությունները: Համաշխարհային փորձի հիմնական գործառույթներից ք.Երևանի պայմաններում առավել կարևոր են պատմամշակութային արժեքի պահպանության և կառուցվածքային թերությունների վերացման խնդիրները:
5. Բնակելի կառուցապատման արդիականացման գլխավոր նպատակներն են կառույցների կոնստրուկտիվ անթույլատրելի փոփոխությունների վերացումն ու արտաքին

ճարտարապետության կարգավորումը, որոնք էլ կանխորոշում են գործընթացի հիմնական գործառույթները։

5.1. Կոնստրուկտիվ խնդիրների տեսանկյունից՝

- միջհարկային ծածկերի վերակառուցում (ըստ անհրաժեշտության),
- կրող պատերի մեջ փոփոխության ենթարկված բացվածքների ամրացում և կարգավորում,
- կցակառույցների կարգավորում, ամրացում կամ ամբողջական վերակառուցում,
- տանիքների վերակառուցում,
- ստորգետնյա կոնստրուկցիաների ամրացում (ըստ անհրաժեշտության)։

5.2. Արտաքին ճարտարապետական լուծումների տեսանկյունից՝

- առաջին հարկի տարածության ֆունկցիոնալ փոփոխություն,
- փողոցային ճակատների կարգավորում՝ առաջին հարկի սահմաններում վերակառուցման կազմակերպված միջոցառումների իրականացում, ընդհանուր ճակատային հարթությունների մաքրում, տարրերի նույնացում, գունային լուծումների հստակեցում, նախկին տեսքին համահունչ ժամանակակից կերպարի ձևավորում,
- բակային ճակատների կարգավորում՝ կցակառույցների մասնակի լրացումներ, բացվածքների հնարավոր նույնացում, գունային լուծումների, մակատեսքերի և բակային միջավայրի գեղարվեստական խնդիրները լուծող այլ յուրօրինակ միջոցների կիրառում,
- տանիքների և վերնահարկերի կարգավորում՝ վերակառուցում, վերնահարկերի ճակատների մաքրում և կամայական լուծումների վերացում, բնակելի ֆունկցիայով շահագործվող միասնական գեղարվեստական լուծմամբ ձեղնահարկերի զանգվածային իրականացում։

Արդիականացման գործառույթներին պետք է նախորդեն նախապատրաստական միջոցառումներ, որոնց հիման վրա կհստակեցվեն գործընթացի քայլերը։ Հարկավոր է քաղաքի ողջ տարածքում անցկացնել դիտանցումներ և կատարել բնակելի շենքերի հաշվառում։ Այնուհետև յուրաքանչյուր կառուցվածքի վերաբերյալ պետք է հավաքել հնարավոր բոլոր նյութերը՝ լուսանկարներ, գծագրեր, տարբեր տեղեկություններ, իրականացնել նաև տեխնիկական վիճակի հետազոտություններ։ Վերը նշված հետազոտական նյութի հիման վրա անհրաժեշտ է կազմել ք.Երևանի 1920-50թթ. բնակելի շենքերի փաստագրական նյութերի կատալոգ, որտեղ յուրաքանչյուր շենքի կամ համալիրի վերաբերյալ հավաքված նյութը հանդես կգա առանձին համարի տակ։ Նման ծավալուն փաստաթղթի առկայությունն արդիականացման ընդհանուր գործընթացի շրջանակներում հնարավորություն կստեղծի յուրաքանչյուր կառույցի վերակառուցման աշխատանքներում ցուցաբերել նաև անհատական մոտեցումներ, որոնք առավել կբարձրացնեն կատարվող աշխատանքների և վերջնական արդյունքի որակը։

К.Р.Азатян

ЖИЛИЩНАЯ АРХИТЕКТУРА ЕРЕВАНА В XX ВЕКЕ, ПРОБЛЕМЫ МОДЕРНИЗАЦИИ ЗАСТРОЙКИ 1920-50-Х ГГ.

Обсуждаются проблемы модернизации жилых зданий г.Еревана, сооруженных в 1920-50-х гг. Обосновывается важное значение застройки данной эпохи в процессе формирования образа города, чем и определяется требование особого внимания к ее охране. Проблемы модернизации жилых зданий рассматриваются по следующим направлениям: необходимость охраны, воздействие времени и потребность модернизации, опыт модернизации и функции. В результате анализа выявляются основные направления процесса модернизации жилых зданий г.Еревана, сооруженных в 1920-50-х гг.

Ключевые слова: *жилое здание, г.Ереван, архитектура 1920-50-х гг., модернизация, реконструкция, охрана, городская среда, конструктивное решение, фасад, крыша, пристройка, процесс, функции*

K.R.Azatyan

RESIDENTIAL ARCHITECTURE OF YEREVAN IN 20TH CENTURY, PROBLEMS OF MODERNIZATION OF THE 1920-50s DEVELOPMENT

The problems of modernization of residential buildings of Yerevans built in 1920-50s are discussed. The importance of the development of this epoch in the process of the city image formation is substantiated, which determines the demand for special attention to its conservation. The problems of modernization of residential buildings are considered in the following directions: necessity for conservation, impact of time and necessity for modernization, modernization experience and functions. In the result of analysis, the main areas of the modernization process of residential buildings, built in 1920-50s in Yerevan, are identified.

Keywords: residential building, Yerevan, architecture of 1920-50s, modernization, reconstruction, conservation, urban environment, constructive solutions, facade, roof, annex, image, process, functions.

Գրականություն

1. **Григорян А.Г., Товмасян М.Л.** Архитектура Советской Армении. - М.: Стройиздат, 1986. -320 с.
2. **Долуханян Л.К.** Архитектура Советской Армении: 20-ые годы. – Ереван: Советакан грох, 1980. - 85 с.
3. **Ազատյան Կ.Ռ.** Անսամբլային լուծումը՝ որպես Երևանում 1920-1955 թվականներին կառուցված բնակելի շենքերի ճարտարապետության հիմնական բնորոշ հատկանիշ // ԵՃՇՊՀ գիտական աշխատությունների ժողովածու. - Երևան, 2011. – Հ. I (40). - էջ 32-40:
4. **Линч К.** Образ города: перевод с англ. - М.: Стройиздат, 1982. - 328 с.
5. **Оганесян М.Г.** Модернизация массивов жилой застройки 1920-1930-х годов и их охрана, как памятников градостроительства: Автореф. дис. … канд.архит./ ЕрАСИ. – Ереван, 1996.- 28 с.
6. **Մանուկյան Ա.Մ.** Պատմական միջավայրում կառուցապատման սկզբունքային մոտեցումները // Հայաստանի շինարարների տեղեկագիր. - Երևան, 1998. – N 11-12 (28-29). - էջ 28-29:

7. **Иконников А.В.** Архитектура города. - М.: Стройиздат, 1972. - 215 с.
8. **Цайдлер Э.** Многофункциональная архитектура: перевод с англ. - М.: Стройиздат, 1988. - 151 с.
9. **Мюллер-Менкенс Г.** Новая жизнь старых зданий. Непрерывность развития архитектуры: перевод с нем. - М.: Стройиздат, 1981. - 247 с.
10. **Махровская А.В.** Реконструкция старых жилых районов крупных городов. – Л.: Стройиздат, 1974. - 192 с.
11. **Сотников Б.Е.** Архитектурно-историческая среда: Учебное пособие / УлГТУ. - Ульяновск, 2010. - 208 с.
12. **Тимохов Г.Ф.** Модернизация жилых зданий. - М.: Стройиздат, 1986. -190 с.
13. **Соколов В.К.** Основные методы и принципы реконструкции жилых зданий. - М.: Стройиздат, 1969. - 232 с.
14. **Агаджанян Л.В.** Формирование градостроительного партера городской застройки // Сборник научных трудов ЕГУАС. - Ереван, 2006. – Т. II (28). - С. 12-14.
15. **Енгоян А.Р., Азатян К.Р.** Архитектурно-градостроительные проблемы жилой застройки центра Еревана в настоящем // Вестник СГТУ. – Саратов, 2014. - № 3 (76). - С. 114-119.
16. **Рашидян Г.Г.** Задачи развития доступного жилища на современном этапе // Бюллетень строителей Армении. - Ереван, 1998. - N 8 (25). - С. 1-3.

Աշխատանքն իրականացված է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ «ՀՀ ճարտարապետական և շինարարական համալիրների կայուն զարգացման ուղիների բացահայտում, ճշգրտում, ներդրման առաջարկությունների և հանձնարարականների մշակում՝ մշտական մոնիտորինգի կիրառմամբ» ծրագրի շրջանակում:

Ազատյան Կարեն Ռուբենի, ճարտ. թեկն., դոց. *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ակ. Ալ. Թամանյանի անվ. Ճարտարապետության և շինարարության պրոբլեմային լաբորատորիա, գ.ա., Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, (+374)55774607, karenazatyan77@gmail.com*
Азатян Карен Рубенович, канд. архит., доц. *(РА, г.Ереван) - НУАСА, Проблемная лаборатория Архитектуры и строительства им. академика Ал. Таманяна, н.с., кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, (+374)55774607, karenazatyan77@gmail.com*
Azatyan Karen Ruben, PhD in Architecture, associate professor *(RA, Yerevan) - NUACA, Chair of Architecture Drafting and Design of Architectural Environment, (+374)55774607, karenazatyan77@gmail.com*

Ներկայացվել է՝ 08.09.2017թ.
Ընդունվել է տպագրության՝ 15.09.2017թ.